Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ՄԵՌՈՆՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

(25 սեպտեմբեր 1983 թ.)

«Էջ Միածինն է Հօրէ, և լոյս փառաց ընդ նմա»:

Հայաստան աշխարհ իջավ Միածին Որդին Քրիստոս, և նրա հետ լույսը աստվածային փառքի, լույսը Սուրբ Հոգու:

Այս տեսիլքով կառուցվեց նվիրական Տաճարը այս, 303 թվականին, որի կամարների տակ ենք հավաքվել մենք բոլորս այսօր:

Այս տեսիլքով է հայ ժողովուրդը ապրել, տքնել, երազել ու գոյատևել հազար յոթ հարյուր տարիներ շարունակ:

Այս տեսիլքով է աճել ու ծաղկել գանձարանը հայ ոգեկանության:

Այս տեսիլքով հայոց պատմությունը դարձել է մի հերոսական դյուցազներգություն՝ վասն Քրիստոսի և վասն ազատության:

Մենք բոլորս, այսօր ապրող հայերս ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, վավակներն ենք Մեծ Լուսավորչի այս հրաշք տեսիլքի, ժառանգորդներն ենք փառաց լույսի:

Այո, ինչպես մեր նախնիք, մենք ևս հավատում ենք Միածին Որդու հետ հայոց աշխարհ իջած փառաց լույսին, Սուրբ Հոգու լույսին, լույս, որով լուսավորված է մեր ազգի հոգին, լույս, որով բյուրեղացել է մեր մայրենի լեզուն և ողջ մշակույթը հայկական, լույս, որով շաղախվել են բոլոր վեհ ու խիզախ իրագործումները մեր ազգային պատմության:

Փառաց լույսի նյութական և խորհրդավոր արտահայտություններից մեկն է նաև մյուռոնը, որը մեր ժողովուրդը կոչում է սրբալույս մյուռոն:

Մենք հավատում ենք, որ այս օրհնված մյուռոնի ամեն մի կաթիլի մեջ շողում է մի ճառագայթ աստվածային փառաց լույսից, քանի որ ամեն անգամ նոր մյուռոնի մեջ խառնվում է հին մյուռոն: Ամեն նոր օրհնված մյուռոնի մեջ կա մի մասնիկ Սուրբ Գրիգոր Լուսավորչի օրհնած առաջին մյուռոնից:

Արդ, բակկատարած աղոթում ենք այսօր ձեզ հետ միասին, որ մեր աղերսներով բացվեն ողորմության դռները երկնքի, և Սուրբ Հոգու աստվածային զորությունը իջնի առատապես Մեր օրհնած այս նոր մյուռոնի վրա, և նրանով բաշխվեն Սուրբ Հոգու շնորհները՝ մեր եկեղեցիներին, հայոյն մեր հավատացյալ ժողովրդին ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի:

Թող այս սրբալույս մյուռոնով ավելի և ավելի լուսավորվի հոգին ու կյանքի ճանապարհը հայ հավատացյալների, և առավել պայծառանա մեր ժողովրդի քրիստոնեական հոգին:

Այս լուսափայլ մյուռոնով թող էլ ավելի ամրապնդվեն սերն ու միությունը մեր մայր Եկեղեցու և ժողովրդի:

Այս զմրուխտ մյուռոնով մեր ժողովրդի կյանքը թող դառնա էլ ավելի օծուն Սուրբ Հոգու շնորհներով, Սուրբ Հոգու լուսավորող, մխիթարող ու խաղաղարար շնորհներով:

Ավելի լույս, ավելի խաղաղություն մեր Եկեղեցու զավակներին և նրանց հայրենական ազգային կյանքին:

Ավելի լույս, ավելի խաղաղություն հայոյն աշխարհին, որ մեր օրերին սոնքան մթագնած է ու խռովահույզ:

Թող խորտակվեն մանավանդ պատերազմի բոլոր զենքերը, և թող խափանվեն մահ ու ավեր սերմանող ուժերը չարի:

Թող այս մյուռոնի շնորհներով լսելի դառնա աշխարհին Աստուծո սաստը «Ո՞ւր է Աբել, եղբայր քո»:

Խաղաղության աղավնին արդար, թող ազատ սավառնի աշխարհից աշխարհ, ավետելով բոլոր մարդկանց, բոլոր ազգություններին՝ սեր, եղբայրություն և կյանք ներդաշնակ:

Հրաշքի ու երազանքի այս սրբազան պահին, ես՝ Հայրապետը Հայոց, բակկատարած աղոթում եմ. «Մարդասեր Աստված, տուր աշխարհիս խաղաղություն, ազգիս հայոց սեր, միություն»:

«Եւ արդ՝ Տէր ողորմութեան, Հայր լուսոյ և աղբիւր ամենայն բարութեանց, առաքեա զամենապօր Հոգիդ քո սուրբ յառաջադրեալ Մեռոնս, և արա զսա յօծումն սրբութեան, շնորհք հոգևոր, կենաք կենաց մերոց, պահապան և սրբարար հոգւոյ և մարմնոյ, իշ ցնծութեան ..... զգեստ լուսաւոր, սրբութիւն հոգւոց և մարմնոց, շնորհք հոգևորական, կնիք արդարութեան, զէն հաւատոյ և խաղաղութեան, ոգւոց փրկութիւն, ուրախութիւն յաւիտենական, զի որ ոք օծցի ի սմանէ՝ վերստին ծննդեան իւղով, առաջի կալով քեզ յաւուրն դատաստանի՝ փայլեսցի որպէս զաստեղս երկնից. ի պայծառութիւն սրբոց». ամեն: